# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5295-Ա « 26 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի Հ.2981-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 22.12.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2009 թվականի ապրիլի 20-ի «Կիևյան փողոց 2-րդ նրբանցքի հ.32/1 բնակելի տան նկատմամբ Լևոն Աղասիի Ավետիսյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.2981-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Կիևյան փողոց 2-րդ նրբանցքի հ.32/1 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:»:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**